ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 10, 1962 Общественные науки

ԴԻՑԱԿԱՆ ԼՐԱՏՈՒ

ԶԵՅԹՈՒՆԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅԱՆ 100-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ՆԻՍՏ

Թուրքական բռնակալության դեմ հայ ժողովրդի մղած ազատագրական շարժման փառավոր էջերից մեկին՝ 1862 թ. Զեյթունի հերոսամարտին էր նվիրված Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Պատմության ինստիտուտի գիտական նիստը սեպտեմբերի 5-ին։

Բաց անելով նիստը, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Համբարձումյանը ասաց.

—Որքան էլ ողբերգական է եղել Զեյթունի հետագա սեփական պատմությունը, այնուամենայնիվ 1862 թ. ապստամբության հաղթանակը արդարացիորեն դիտվում է որպես հայ ժողովրդի պատմության կարևորագույն և ուրախալի փաստերից մեկը։ Այդ հաղթանակը հայ աշխատավոր զանգվածներին նոր հույս և վստահություն ներշնչեց, բարձրացրեց հայ ժողովրդի ազգային ինքնագիտակցությունը։

Զեյթունի աշխատավոր ժողովրդի արյունը իզուր չի թափվել։ Զեյթունցիների պայքարը հանուն ազատության և մարդկային պատվարժանության խաղացել է իր կարևոր դերը հայ աշխատավորության հեղափոխական գիտակցության զարգացման գործում։ Այսօր Սովետական Հայաստանը գտնվում է անանխընթաց վերելքի ճանապարհին։ Նա երբեք չի մոռանում անցյալի ազատագրական պայքարի բաղ հերոսներին։ Չի մոռանում նաև Զեյթունի քաջերին։

Բացման խոսքից հետո «Զեյթունի 1862 թ. հերոսամարտը» թեմայով զեկուցում կարդաց Հայկական ՍՍՌ ԳԱ ակադեմիկոս Մ. Ներսիսյանը։

Զեկուցման սկզբում նա հանգամանորեն կանգ առավ ապստամբությունը սկսվելու պարագաների վրա։ Խոսելով թուրքական բռնապետության տակ հեծող Զեռնոգորիայում, Հերցեգովինայում և Բուլղարիայում 19-րդ դարի կեսին Օսմանյան կայսրության դեմ ծավալված ազգային-ազատագրական շարժման նոր վերելքի մասին, զեկուցողը նշեց, որ սուլթանական կառավարությունը լրջորեն վախենում էր հայ լեռնցիների ազգային--ազատագրական շարժումից և նախապատրաստություններ էր տեսնում այդ շարժումը ճնշելու համար։

Նշելով, որ Մարաշի կառավարիչ Ադիլ փաշայի կողմից 1862 թվականի հուլիսին Զեյթունի պաշարումը և նրա շրջակայքի հայկական գյուղերը սրի ու հրի մատնելը վաղօրոք նախապատրաստված է եղել թուրքական կառավարության կողմից, զեկուցողը հիմնականում կանգ առավ 1862 թ. օգոստոսի 2-ի հերոսամարտի վրա, երբ Զեյթունի ողջ բնակչությունը վճռական գրոհի անցնելով ջախջախեց ու փախուստի մատնեց Ադիլ փաշայի հսկայական բանակը։

Առարկելով այն կարծիքներին, թե իբր Զեյթունի ապստամբությունը պարտությամբ վերջացավ, քանի որ զեյթունցիները համաձայնվեցին հարկեր վճարել օսմանյան կառավարությանը, զեկուցողը նշում է, որ այն անշուշտ հաղթանակ էր, քանի որ Զեյթունի հայ բնակչությանը ոչնչացնելու սուլթանի որոշումը ձախողվեց։

Զեկուցողի կարծիքով, սուլթանական Թուրքիայի դեմ մղվող պայքարում Զեյթունի ապստամբությունը տարերային բնույթ չի կրել, այն կապված է եղել դեմոկրատական հոսանքների հետ և նրա նախապատրաստմանն ու զեկավարմանը մասնակցել են արևմտահայ մտավորականության ներկայացուցիչները (Ս. Թագվորյան, Մ. Պեշիկթաշլյան, Ներենց և ուրիշներ)։

Խոսելով այն մասին, որ ապստամբությունը լայն արձագանք գտավ թե արևմտահայության և թե արևելահայության մեջ (Կ. Պոլիս, Թիֆլիս, Մոսկվա), ազդեց Մուշում, Վանում, Զարսանջակում, Էրզրումում և այլուր սկսված ազատագրական շարժումների վրա, Մ. Ներսիսյանը նշում է, որ հայ իրականության մեջ դա առաջին դեպքն էր, որ մի դավառում բռնկված շարժումը ստանում էր համազգային կերպարանք և դիտվում որպես հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժման մի խոշոր երևույթ։

Զեկուցման մեջ խոսվեց նաև Զեյթունի ազատագրական շարժման նկատմամբ արևմտյան տերությունների և հատկապես անգլիական կառավարության թշնամական վերաբերմունքի մասին։

Պատմության դժվարին ուղիներով անցած բազմաչարչար հայ ժողովուրդը,—եզրափակում է Մ. Ներսիսյանը,—իր հանգստությունը ստացավ միայն Խորհրդային Հայաստանում, եղբայրական ժողովուրդների բազմազգ ընտանիքում, երբ վերացավ դարեր շարունակ հայ ժողովրդի գլխին կախված բնաջնջման ու հալածանքի դամոկլյան սուրը։

«Դրվագներ Զեյթունի հերոսամարտից» թեմայով զեկուցում կարդաց պատմական գիտությունների թեկնածու Վ. Մելիքսետյանը։

Ամեն անգամ, երբ խոսք է բացվում հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմության մասին,—ասում է նա,—մեր աչքն նախ և առաջ ամբողջ հասակով ծառանում են քաջագուն զեյթունցիներն իրենց բարձրարերձ, անառիկ լեռներում։

Խոսելով օսմանյան Թուրքիայի բռնապետական կարգերի, բազմաթիվ ու բազմատեսակ ծանր հարկերի ու տուրքերի, իրավական նորմաների իսպառ բացակայության, քաղաքական և տնտեսական դժնդակ պայմանների մասին, զեկուցողը այնուհետև նկարագրում է լեռնային Կիլիկիայի անառիկ գավառներից մեկի՝ Զեյթունի համայնքի ներքին կյանքը։

Զեյթունի նվաճման փորձերը,—շարունակում է զեկուցողը,—օսմանյան բանակները կատարել են տակավին 16-րդ դարի առաջին քսանամյակում, բայց խիզախ լեռնականները փակվելով կիրճերում ու անդնդախոր ձորերում, պաշտպանել են իրենց հայրենի հողը։ Օսմանյան կառավարության կողմից Զեյթունի կիսաանկախ դրությունը վերացնելու նպատակով 18-րդ դարի վերջին—19-րդ դարի առաջին կեսին կատարված հարձակումների ժամանակ թուրքական կանոնավոր զորախմբերից և ոչ մեկին չհաջողվեց գրավել և ներքին ինքնավարությունից զրկել արծվաբույն Զեյթունը։

Այնուհետև զեկուցողը խոսում է 1862 թ. օգոստոսի 1-ի և 2-ի ճակատամարտերում քաջագուն զեյթունցիների անօրինակ սխրագործությունների մասին, բերելով մի շարք անմոռաց դրվագներ՝ «Կոտորածի ձորի» ճակատամարտը, որտեղ ծուղակն ընկավ և գլխովին ջախջախվեց թշնամու մի ամբողջ զորաչոկատ, ալեհեր ծերունի Գրիգոր Մարտիրոսյանի ջոկատի կողմից Աստվածածնա վանքի մատույցներում մղված կռիվները, 20-ամյա պատանի Մելիքսեթ Քասմյանի հերոսագործությունը, որը ոգևորության աղբյուր է դառնում Մ. Պեշիկթաշլյանի հայրենասիրական սրտառուչ բանաստեղծությունների համար և այլն։

«Զեյթունի ապստամբության արձագանքները հայ իրականության մեջ» թեմայով հետաքրքրական զեկուցումով հանդես եկավ պատմական գիտությունների թեկնածու Հ. Ղազարյանը[1]։

Նիստի վերջում հայրենասիրական ջերմ ելույթ ունեցավ Ուրուգվայի Մոնտեվիդեո քաղաքի զեյթունցիների Հայրենակցական Միության ատենապետ Ա. Ահարոնյանը։ Նա Հայաստանի ԳԱ Պատմության թանգարանին նվիրեց Զեյթունի համայնապատկերը, զեյթունցիների զրոշակ և մի սափոր։

Գիտական նիստը աշխույժ հետաքրքրություն էր առաջացրել մայրաքաղաքի գիտական հասարակայնության մեջ։ Ակադեմիայի նիստերի լեփ-լեցուն դահլիճում ներկա էին նաև արտասահմանյան տարբեր երկրներից Հայաստանում հյուր գտնվող մեծ թվով հայեր և Երևանի Նոր Զեյթուն արվարձանի բնակիչներ՝ քաջարի զեյթունցիների հետնորդները։

Վ. ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

---

1 Հ. Ղազարյանի զեկուցումը տպվում է «Տեղեկագրի» սույն համարում։